ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2025 թվականի N157-Ա քաղաք Գյումրի

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ի N 172-Ա, 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-ի N 334-Ա ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ի N 300-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N 2 հավելվածի.

3)ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N 3 հավելվածի.

4)քիմիական վտանգավոր օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) խոշոր հիդեհապայթյունավտանգ օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) ձնաբքի ժամանակ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) խոշոր քարաթափումների և սողանքի առաջացման ժամանակ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը համաձայն N 9 հավելվածի.

10) կոմունալ-էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N 10 հավելվածի.

11) համաճարակների դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N 11 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 3-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 28-ի N 236-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 172-Ա որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի օգոստոսի 10-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովի պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 15-ի N 319-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 334-Ա որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի սեպտեմբերի 28-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մայիսի 13-ի N 89-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 300-Ա որոշումը:

3. Սույն որոշման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է